
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԷԼԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հենակետային վարժարանի անգլերենի ուսուցչուհի
avetisyan.elen@inbox.ru

**ԳՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ**

Բանալի բառեր և արտահայտություններ. հանրամշակութային իրականություն, հանրամշակութային նշույթ, վարքագծի մոդել, հանրամշակութային նորմ, մշակութային կոմպետենցիա, միջմշակութային կոմպետենցիա, իմաստային-գուգորդական դաշտ, գեղարվեստական տեքստ:

Ключевые слова и выражения: социокультурная реалья, социокультурный маркер, модель поведения, социокультурная норма, культурная компетентность, межкультурная компетентность, семанτικο-ассоциативное поле, художественный текст.

Key words and expressions: socio-cultural realia, socio-cultural marker, behavior model, socio-cultural norm, cultural competence, intercultural competence, semantic-associative field, fictional text.

Նախաբան

Սույն հոդվածով փորձ է արվում հիմնավորել գեղարվեստական տեքստի ընթերցանության կարևորությունը սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման գործում: Քննության առարկա են դառնում նաև օտար լեզվի ուսուցման հիմնական միավորները՝ լեզուն, մշակույթը, հաղորդակցական վարքագիծը, ընդհանուր առմամբ հանրամշակութային իրողությունները, որոնց ուսումնասիրությունը հնարավոր է դառնում գեղարվեստական տեքստի ընթերցանության ժամանակ: Բացահայտվում են այն դժվարությունները, որոնք առաջ են գալիս գեղարվեստական տեքստի ընթերցանության ժամանակ մշակութային և այլ բնույթի իրականությունների, հանրամշակութային նշույթների, տվյալ ազգամշակութային հանրությանը բնորոշ վարքագծի մոդելների յուրացման գործընթացում:

Ընդհանուր առմամբ, ներկայացվում են գեղարվեստական տեքստի գործառնությունները սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման գործընթացում:

Բովանդակություն

Ինչպես հայտնի է, օտար լեզու սովորելու նպատակն ու խնդիրները շարունակաբար փոփոխության են ենթարկվում: Օտար լեզու սովորելու նպատակը բովանդակային և գործառական փոփոխությունների է ենթարկվում: Լեզվաբանները, լեզվի մանկավարժները, մեթոդիստները դեռևս նախորդ դարի առաջին քառորդում հստակորեն նախանշեցին օտար լեզու սովորելու նպատակն ու խնդիրները: Դեռևս թարգմանական-քերականական մեթոդի ջատագովները կարևորեցին մշակույթի ուսուցման նշանակությունը: Հետաքրքիր է այն, որ տարբեր մեթոդական դպրոցների ներկայացուցիչները «մշակույթ» եզրույթը սահմանելիս լուսաբանում էին նրա տարբեր հայեցակերպերը: Տարիների ընթացքում «մշակույթ» եզրույթը դինամիկ փոփոխությունների է ենթարկվում: Թարգմանական-քերականական մեթոդի շրջանակներում մշակույթը սահմանափակվում է գրականության և արվեստի կամ գեղարվեստի գործերի ուսումնասիրությամբ: Ուղիղ մեթոդի կողմնակիցները գտնում են, որ մշակույթը ներկայացնում է լեզվակիրների ավանդույթները, սովորույթները, վարքը, փոխհարաբերությունների դինամիկան և այլն: Հաղորդակցական մոտեցման շրջանակներում մշակույթը ներկայացնում է լեզվակիրների կենսաժողովուրդը: Հասկանալի է, որ կենսաժողովուրդը ավելի լայն, տարրաշաղկապ հասկացություն է և ներառում է լեզվակիրների ավանդույթները, սովորույթները, հաղորդակցական վարքագիծը: Փաստորեն, մեթոդիստներն աստիճանաբար մոտենում են լեզվակիրների հաղորդակցական վարքագծի ուսումնասիրության գաղափարին, որն ինքնըստինքյան ներառում է թե՛ խոսքային, թե՛ ոչ խոսքային-հաղորդակցական միջոցները:

Այսպիսով, խնդիր է դրվում ուսուցողական նպատակներով ընտրել և ուսուցման ընթացքում կիրառել այնպիսի տեքստեր, որոնք հնարավորինս ամբողջական են ներկայացնում ուսումնասիրվող լեզվով հաղորդակցվողների մշակույթը: Մի կողմից՝ գրական տեքստերը հիմնականում կատարում են նշված գործառույթը՝ ներկայացնում են լեզվակիրների հաղորդակցական վարքագիծը, նրանց պատկերացումները, մոտեցումները, կենսատիրապետությունները և այլն: Մյուս կողմից, գրական տեքստերը ժամանակին և բովանդակային առումով կարող են այնքան բազմազան լինել, որ երբեմն կարող են ոչ թե ներկայացնել տվյալ հանրության կենսատիրապետությունները, այլ հակառակը՝ ներմուծել անթիվ կեղծ օրակարգեր, խոսույթներ, որոնք բնորոշ չեն տվյալ լեզվամշակութային հանրության անդամներին:

Գիտնականներն արդի փուլում փորձում են սահմանել ոչ միայն «մշակույթ», այլև բուն «լեզվակիր» հասկացությունը: Պատահական չէ, որ ամերիկյան անգլերենում ավելի հաճախ են գործածում «առաջին լեզու»,

«երկրորդ լեզու» հասկացությունները: «Մայրենի լեզու» հասկացությունը բավականին տարողունակ է, երբեմն այն չի ընկալվում որպես լեզու, այլ ընկալվում է որպես մենթալիտետի անմիջական դրսևորում: Լեզվակիրն իր լեզվական նախապատվությունները գնահատելիս հիմնականում սուբյեկտիվ է: Նա, սովորելով անգլալեզու դպրոցում, կարող է հայտարարել, որ իր մայրենին հայերենն է՝ չնայած «դպրոցի» կամ ուսումնառության լեզուն հիմնականում դառնում է առաջին լեզու:

Կրամշն այդ առումով նշում է, որ ««լեզվակիր» հասկացությունն արդեն մի քանի տարի է դարձել է հակասական հասկացություն»¹: Ավելին որոշ գիտնականներ, խոսելով գլոբալացման հետևանքների մասին, նշում են, որ «լեզվակիրը մեռել է»²: Պատճառներից մեկն այն է, որ ժամանակակից անհատն ապրում է բազմալեզու, բազմամշակույթ հասարակության մեջ: Պատահական չէ, որ նույն Կրամշին առաջարկում է «միջմշակութային խոսող» հասկացությունը, այն առումով, որ մարդն ապրում է տարբեր լեզուների և մշակույթների խաչմերուկում, և անկախ այն բանից՝ նա գիտակցում է, թե ոչ՝ անձը տարբեր մշակույթների կրող է: Երաժշտությունը, ֆիլմերի դիտումը, գեղարվեստական գրականությունը վաղուց արդեն աստիճանաբար կորցնում են իրենց «ազգային» դիմագիծը:

Հատկանշական է այն, որ օտար լեզվի ուսուցման ընթացքում շատ դժվար է առանձնացնել լեզվի և մշակույթի ուսուցումը: Խնդիր է դրվում դրանց փոխկապացված ուսուցման արդյունավետ մոդելներ ստեղծել: Ավելին, երբեմն առաջարկվում է «թիրախավորել» միայն մշակույթը, իսկ լեզուն ուսուցանել որպես մշակույթը յուրացնելու միջոց: Մեթոդիստները հստակորեն սահմանում են «մշակութային իրազեկություն» և «միջմշակութային կոմպետենցիա» հասկացությունները:

Գիտնականները մեկնաբանում են տվյալ եզրույթները լայն և նեղ իմաստներով: Սույն հետազոտության շրջանակներում առաջին պլան է մղվում այն հարցադրումը, թե մշակութային իրազեկությունը (“awareness”) որտեղ է ձևավորվում՝ բնական լեզվական միջավայրում, թե՞ ուսումնական պայմաններում: Ակնհայտ է, որ գրական տեքստի ընթերցանության, վերլուծության միջոցով խնդիր է դրվում ձևավորել մշակութային

¹ Kramsch, C. 1998. The privilege of the intercultural speaker. Language learning in intercultural perspective. M. Byram & M. Fleming (eds.). Cambridge: Cambridge University Press. 16– 31.

² Paikeday, T. 1985. The native speaker is dead!. Toronto: Paikeday Publishing Inc. Davies, A. 1991. The native speaker in applied linguistics. Edinburgh: Edinburgh University Press. Widdowson, H. G. 1994. The ownership of English. TESOL Quarterly 28 (2), 377–388.

իրազեկություն, որը բովանդակային առումով կարող է մոտ լինել լեզվակիրների մշակութային իրազեկությունը, սակայն լեզվակիրներին բնորոշ մշակութային իրազեկություն ձևավորելու հնարավորությունները խիստ սահմանափակ են:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է շեշտադրել այն գաղափարը, որ գրական տեքստը եղել և մնում է մշակութային, հանրամշակութային, միջմշակութային կոմպետենցիաների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց: Երկրորդ լեզվի ուսուցման գործընթացում գրական տեքստի կիրառումը հնարավորություն է տալիս դիտարկել աշխարհը տարբեր տեսանկյուններից: Գրական տեքստը կատարում է նախ և առաջ ճանաչողական գործառույթ: Մյուս կողմից, ամեն մի գրական տեքստ ներկայացնում է կոնկրետ տեղում և ժամանակաշրջանում ապրող, գործող հերոսների հուզական-զգացմունքային դաշտը: Գրական հերոսների սուբյեկտիվ աշխարհը կարող է ոչ միայն հմայել և հրապուրել ընթերցողին, այլև նրանց տեղափոխել այլ իրականություն³: Հանաուրերը ներկայացնում է երեք փաստարկ գրական տեքստերը երկրորդ լեզվի կրթության մեջ ներառելու համար⁴: Նախ, նա թվարկում է գրական տեքստեր կարդալու մոտիվացիոն ասպեկտները, որոնք մեծացնում են ուսանողների անձնական ներգրավվածությունը և հաճույքը՝ այդպիսով հանգեցնելով նրանց մոտիվացիայի բարձրացմանը: Երկրորդ փաստարկը, որը ներկայացնում է Հանաուրերը, կապված է գրական տեքստերի ընթերցանության հոգեբանական հայեցակետերի հետ: Ինչպես պնդում են Չանը⁵, Հանաուրերը⁶ և Մաքքեյը⁷, գրական տեքստերը հեշտացնում են երկրորդ լեզվի լեզվակաղապարների յուրացումը, ինչպես նաև նպաստում են իմաստային-գույժողական յուրացմանը: Բոլոր նշված հեղինակները շեշտադրում են գրականության դերը մշակութային իրազեկության զարգացման գործում: Գրականությունը, անկախ այն բանից՝ ինչ ոճ ու ժանր

³ Soter, A. 1997. Reading literatures of other cultures: Some issues in critical interpretation. Reading across cultures: Teaching literature in a diverse society. T. Rogers & A. Soter (eds.). Columbia University: Teachers College Press. 2 13–2 2 7.

⁴ Hanauer, D. 2 001. Focus-on-cultural-understanding: literary reading in the second language classroom. CAUCE, Revista de Filologia y su Didactica 2 4, 389–404.

⁵ Chan, P. K. W. 1999. Literature, language awareness and EFL. Language Awareness 8 (1), 38–50.

⁶ Hanauer, D. 1997. Poetry reading in the second language classroom. Language Awareness 6, 1–15.

⁷ McKay, S. 1986. Literature in the ESL classroom. Literature and language teaching. C. Brumfit & R. Carter (eds.). Oxford: Oxford University Press. 191–198.

Է ներկայացնում, արտացոլում է կոնկրետ հանրամշակութային հարաբերություններ, իրողություններ, երևույթներ, տվյալ ժամանակաշրջանում ապրած, ապրող մարդկանց գաղափարներն ու երազանքները: Անկախ այն բանից, թե գրական գործն ինչքան ճիշտ է արտացոլում իրականությունը, այն միևնույն է ընդհանուր պատկերացում է տալիս լեզվակիրների մտքերի, համոզմունքների, հավատալիքների, նախապաշարմունքների և այլ արժեքների մասին: «Ճիշտ վերլուծությամբ կարելի է բացահայտել իրական հասարակության կողերն ու կանոնները»⁸:

Մի կողմից, ինչպես Հանատուրերն է նշում, «մշակույթները չի կարելի ընկալել որպես մոնոլիտ, ամբողջական միավոր»⁹. Մյուս կողմից, մշակույթը տարբեր անհատներ է ներկայացնում, որոնք իրարից տարբերվում են արժեքներով, հավատալիքներով, նպատակադիրքորոշումներով, անձնային որակներով և փորձով:

Խնդիր է դրվում յուրացնել լեզվակիրների մշակույթը ոչ թե անհատի մակարդակում, այլ տարբեր անհատների տեսանկյունից: Ակնհայտ է, որ գրական տեքստը ներկայացնում է այս կամ այն մշակույթը: Սակայն ավելի ճիշտ է ասել, որ այդ մշակույթը միշտ դիտարկվում է կոնկրետ հասարակական կամ պատմական ենթատեքստում:

Կարևոր խնդիր է ընդհանրապես գրական տեքստն ընթերցելու գործընթացը կազմակերպելը: Ակնհայտ է, որ մայրենի լեզվով գրական տեքստեր ընթերցելու փորձ չունեցող սովորողը դժվարությամբ է ընթերցում օտարալեզու գրական տեքստը: Մյուս խնդիրը վերաբերում է գրական տեքստը հասկանալուն կամ այն ապակոդավորելուն: Ընթերցանությունը յուրահատուկ ռեֆլեքսիայի տեսակ կամ դրսևորում է: Ընթերցողը պետք է ունենա համապատասխան հենքային կամ հանրամշակութային գիտելիքներ: Ընդ որում, օտարալեզու տեքստի ընթերցանության ժամանակ ընթերցողը քայլ առ քայլ լրացնում է ոչ միայն իր և տեքստում գործող անձանց միջև գոյություն ունեցող տեղեկատվական բացը, այլև նրանց միջև առկա մտածելակերպերի, կենսաոճերի, կենսադիրքորոշումների տարբերությունները:

Ընդհանուր առմամբ, ցանկացած գրական տեքստ ընկալելու գործընթացը սուբյեկտիվ բնույթ ունի: Ընդ որում, ընթերցողը փորձում է հաղթահարել գրական տեքստում նկարագրվող իրականության

⁸ Collie, J. & S. Slater. 1992 . Literature in the language classroom. A resource book of ideas and activities. Cambridge: Cambridge University Press.

⁹ Hanauer, D. 1997. Poetry reading in the second language classroom. Language Awareness 6, 1–15.

սուբյեկտիվ ընկալումը: Հեղինակի սուբյեկտիվ պատկերացումները, աշխարհընկալումը, կարծրատիպերը դառնում են ընթերցողի վերլուծության առարկա: Կրամշին ավելի է հեռուն գնում: Նա կարծում է, որ ընթերցողը հաղթահարում է թիրախային լեզուն ներկայացնող «մշակութային իրականությունը» և «մշակութային երևակայությունը»¹⁰: Փաստորեն, ընթերցողն ընթերցանության ընթացքում յուրացնում է լեզվակիրներին բնորոշ հանրամշակութային իրողությունները, երևույթները, փաստերը, առարկաները, որոնք երբեմն մայրենի լեզվի տեսանկյունից իրակություն են /կամ բառ-իրակություն, կամ առարկա-իրակություն/: Ընդ որում, ինչպես Կրամշն է նկատում, ընթերցողը հազվադեպ է հասկանում լեզվակրի դիրքորոշումը, մոտեցումը: «Առաջանում է յուրահատուկ բաց, տարածություն երկու մշակույթների միջև, որը Կրամշը պիտակավորում է որպես «երրորդ տարածություն», որը դառնում է միջմշակութային հաղորդակցության առանցքային եզրույթը»¹¹:

Ըստ Գոնսալես-Մատոսի՝ «երրորդ տարածությունը մի տեղ է, որով գրական տեքստերն ընթերցվում են և նախանշում են ընթերցանության չափանիշները: Այն խթանում է մի շարք հարցերի ձևակերպմանը, ռեֆլեքսիային, նպաստում է քննադատական մտածողության զարգացմանը, ստեղծում է բարենպաստ միջավայր լեզուն ուսումնասիրողների ճանաչողական և հուզազգայական կարողությունների զարգացման համար»¹²:

Հանաուրերը զարգացնում է տեքստի ընթերցանությամբ մշակույթը հասկանալու յուրահատուկ մեթոդը, որը ենթադրում է մեկնաբանել տեքստը սեփական մշակույթի և փորձի տեսանկյունից:

Առաջին փուլում օտար լեզու ուսումնասիրողը փորձում է մեկնաբանել տեքստն իր հանրամշակութային փորձի տեսանկյունից: Երկրորդ փուլում նա փորձում է հասկանալ կամ հաշվի առնել տեքստի տարբեր մեկնաբանությունները, որոնք արվել են հիմնականում փորձագետի, գրականագետի, հոգելեզվաբանի կամ բուն լեզվաբանի կողմից: Փաստորեն, ընթերցողն աստիճանաբար սկսում է յուրացնել տեքստի մեկնաբանության մասնագիտական դաշտը, մոտեցումները,

¹⁰ Kramsch, C. 2 003. From practice to theory and back again. Context and culture in language Wąsikiewicz-Firlej, E. Developing cultural awareness through reading literary texts.

¹¹ Kramsch, C. 2 000. Context and culture in language teaching. Oxford: Oxford University Press.

¹² Նույն տեղում:

անգամ տեսությունները և հայեցակարգերը: Ռեֆլեքսիայի կամ վերոռեֆլեքսիայի բարձարգույն մակարդակ է տեքստը որևէ կոնկրետ տեսության տեսանկյունից մեկնաբանելը: Մեթոդիստներն այդ առումով լուրջ հաջողությունների են հասել, հատկապես երբ խոսք է գնում գրական տեքստը հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման տեսանկյունից մեկնաբանելը: Այդ պարագայում տեքստի ընթերցանությունը բազում գործառնություններ է կատարում: Այն շահադրողում կամ մոտիվացնում է: Ընթերցողին ներգրավում է յուրահատուկ ճանաչողական գործընթացի մեջ: Այն պատճառով է գեղագիտական հաճույք, զարգացնում է ընթերցողի գեղագիտական ճաշակը: Կարևոր է այն, որ տեքստը զարգացնում է ընթերցողի քննադատական և ստեղծագործական մտածողությունը: Առանցքային է տեքստի ընթերցանության դերն այլոց մշակույթը հասկանալու գործում:

Սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման կարևոր պայման է այն, թե ինչ գրական տեքստ է ընտրվում ուսուցողական նպատակներով: Ինչպես հայտնի է, օտար լեզվի ուսուցման հաղորդակցական-ճանաչողական շրջանակներում մեթոդաբանությունից առաջնային է բնագրայնության սկզբունքը: Ըստ այդմ՝ առաջարկվում է ընթերցել բնագրեր, որոնք ստեղծված են լեզվակիրների կողմից լեզվակիրների համար: Ե.Վ.Նոսոնովիչը և Ռ.Պ.Միլրոդը, քննության առնելով բնագրային ուսումնական տեքստի բովանդակային հայեցակերպերը, առանձնացնում են յոթ հայեցակերպ.

1. մշակութաբանական բնագրայնություն, երբ կիրառում են այլ մշակույթի, կենցաղի յուրահատկությունների, լեզվակիրների սովորույթների մասին պատկերացումներ ձևավորող տեքստեր,

2. տեղեկատվական բնագրայնություն, երբ կիրառում են տեքստեր, որոնք պարունակում են սովորողների համար կարևոր, նրանց տարիքային առանձնահատկությունների և հետաքրքրություններին համապատասխանող տեղեկատվություն,

3. իրադրային բնագրայնությունը ենթադրում է բնական իրադրություններ, որոնք ներկայացնում են լեզվակիրների համար հետաքրքիր, քննարկվող թեմաներ, որոնք յուրովի լուսաբանում են ուսումնական տեքստը,

4. ազգային մենթալիտետի բնագրայնություն, որը բացատրում է այս կամ այն դարվածի կիրառման տեղին կամ անտեղի լինելը,

5. ռեակտիվ բնագրայնություն, որը կիրառվում է ուսումնական տեքստի մշակման ժամանակ սովորողների մեջ իրական հուզական, մտածողության և խոսքային արձագանք առաջ բերելու նպատակով,

6. ձևակերպման բնագրայնություն, որը գրավում է սովորողների ուշադրությունը և հեշտացնում է տեքստի հաղորդակցական խնդիրը հասկանալը, հաստատում է նրա կապն իրականության հետ,

7. ուսումնական տեքստերին վերաբերող առաջադրանքների բնագրայնությունը, որ պետք է խթանի տեքստի հետ փոխազդեցությունը, պետք է հիմնված լինի գործառնությունների վրա սկզբնաղբյուրների հետ աշխատելու ընթացքում»¹³:

Մշակութաբանական բնագրայնության ապահովումը ուղղակիորեն նպաստում է սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացմանը, քանի որ գրական տեքստի ընթերցանությունն օգնում է նրանց ծանոթանալ և յուրացնել լեզվակիրների կենցաղավարությունը, սովորույթները:

Սովորողները հիմնականում փնտրում են տեքստում տեղեկատվական բնագրայնության օրինակներ: Սակայն ոչ բոլոր սովորողներն են փորձում գտնել կամ տեսնել տեղեկատվություն լեզվակիրների կենսաածը ներկայացնող առարկաների, երևույթների նկարագրություն: Չնայած ժամանակակից զարգացած երկրների զարգացման տեմպերը շատ բարձր են, Հայաստանում ապրող անձր բավականին լավ պատկերացում ունի այդ երկրներում կիրառվող բարձր տեխնոլոգիաների, մեքենաների, սարքավորումների մասին: Դրա հետ մեկտեղ, Հայաստանում գրեթե չի կիրառվում շենքի դրսում գործածվող լվացքի մեքենա («laundromat»): Նույն բառահիմքով ստեղծված («money laundry») բառակապակցությունը կարող է հետաքրքիր տեղեկատվության աղբյուր հանդիսանալ, քանի որ «փողի լվացք» պատճեն-եզրույթը ոչ բոլոր սովորողներն են հասկանում:

Ընդհանրապես իրադրային բնագրայնությունը տեքստում հաճախակի է հանդիպում, և շատ դեպքերում իրադրությունը կամ ենթատեքստը ճիշտ չընկալելը հանգեցնում է տեքստը չհասկանալուն: Ակնհայտ է, որ նույն խոսքային իրադրությունները հայալեզու անձնավորությունը կարող լրիվ այլ կերպ մեկնաբանել: Այն, ինչ լեզվակրի համար կարող է լինել կարևոր, թիրախային լեզու, սովորողը կարող է անգամ ուշադրություն չդարձնել: Տարբերվում են լեզվակիրների և թիրախային լեզուն ուսումնասիրողների հայացքները, հետաքրքրությունները, նախասիրությունները, ընդհանրապես պատկերացումները

¹³ Носонович Е.В. и Мильруд Р.П. Аутентичность как методическая категория в обучении иностранному языку [Электронный ресурс] / О.Н.Киян. Режим доступа: <http://www.isuct.ru/conf/antropos/section/4/KIYAN.htm>. – Дата доступа: 31.03.2017

կյանքի ու կենցաղի մասին: Բնագրային իրադրությունները հնարավորություն են տալիս ավելի ճիշտ պատկերացում ունենալ լեզվակիրների հանրամշակութային իրողությունների մասին:

Սովորողի համար ազգային մենթալիտետի բնագրայնությունը, որը բացատրում է այս կամ այն դարձվածի կիրառման տեղին կամ անտեղի լինելով, հետո նոր նա կարող է համեմատական կտվրածքով բացահայտել նշված բաղադրիչները: Ցանկացած ժողովրդի մենթալիտետ ինչ-որ առումով իրակություն է, մշակութային իրակություն: Այն այլ լեզուներով ներկայացնելը երբեմն լինում է անհնարին: Այդ է պատճառը, որ ուսուցողական նպատակներով առաջարկվում է ուսումնասիրել այն առարկաներն ու երևույթները, որոնք հստակորեն արտացոլում են այս կամ հանրամշակութային հանրության մենթալ առանձնահատկությունները:

Գրական տեքստի միջոցով հանրամշակութային երևույթները ուսումնասիրելու ընթացքում առանցքային նշանակություն ունի, թե՛ հանրամշակութային իրողությունները և երևույթները ի՞նչ մշակույթ են ներկայացնում, քանի որ շրջանառվում են մշակույթի տարբեր սահմանումներ, և ըստ նշված սահմանումի ավելի է կոնկրետանում ուսումնասիրության առարկան: Բավականին հետաքրքիր է այն տարազատումը, ըստ որի մշակույթները կարող են լինել էլիտար և զանգվածային: Էլիտար մշակույթին է վերաբերում այն ամենը, ինչ մարդուն ավելի կուլտուրական է դարձնում, այսինքն՝ պատմությունը, արվեստը, գրականությունը: Զանգվածային մշակույթին են վերաբերում կենսառճը, սովորույթները, սննդի տիպական օրինակները, հագուստը, երթևեկության միջոցները: Ակնհայտ է, որ հանրամշակութային երևույթները նոր բնութագրեր են ձեռք բերում, երբ հաշվի ենք առնում նշված սահմանումները:

Ակնհայտ է, որ ուսումնական պայմաններում, առանց լեզվակիրների հետ անմիջական շփման ավելի արդյունավետ են ուսուցողական նպատակներով կիրառել այն գրական տեքստերը, որոնք վերաբերում են այսպես կոչված «զանգվածային մշակույթին»¹⁴:

Գրական տեքստերը կարող են ներկայացնել տեղեկատվություն լեզվակիրների հաղորդակցական վարքագծի մասին: Բուն հանրային հաղորդակցությունը, նրա ձևերն ու դրսևորումները յուրահատուկ հանրամշակութային իրողություն են ներկայացնում: Պատահական չէ, որ Ն.

¹⁴ Алешникова Е.Л. Формирование личностной позиции старшеклассников в процессе работы с публицистическим текстом на уроках русского языка. Дисс. ... канд. пед. наук. М., 2 015. 2 97 с.

Բ. Իշխանյանը սահմանում է հանրամշակութային կոմպետենցիան որպես «անհատի կողմից համապատասխան միջմշակութային հաղորդակցություն իրականացնելու ունակություն և պատրաստակամություն»¹⁵: Հանրամշակութային կոմպետենցիայի կարևոր բաղադրիչ է հանրամշակութային ենթատեքստը, այն առումով, որ միայն համապատասխան շփման փորձ ունենալու դեպքում հնարավոր է իրականացնել հաղորդակցություն տարբեր հանրամշակութային իրադրություններում:

Այսպիսով, դիպուկ է այն սահմանումը, ըստ որի «հանրամշակութային կոմպետենցիան ենթադրում է գիտելիքներ լեզվակիրների խոսքային և հանրային վարքագծի, նրանց սովորույթների, էթիկետի, հանրային կարծրատիպերի, արվեստի, մշակույթի մասին»¹⁶:

Գրական տեքստը հարուստ աղբյուր է լեզվաերկրագիտական տեղեկատվության: Ակնհայտ է, որ սովորողները դժվարությամբ են յուրացնում ազգամշակութային նշույթավորում ունեցող բառապաշարը: Պատճառներից մեկն այն է, որ այդ բառապաշարը հիմնականում ոչ համարժեք կամ իրության է, այսինքն՝ կամ չի թարգմանվում, կամ դժվարությամբ է գրադարձվում: Օրինակ՝ Վ.Սարոյանը նկարագրում է Ֆրեզնոյի ինչ-որ թաղամաս, փողոց, խոսում է խանութների, շուկաների և այլ տեղանունների մասին: Հարց է առաջանում՝ արդյո՞ք իմաստ ունի ուսումնասիրության առարկա դարձնել նշված հանրամշակութային իրողությունները՝ այն տեղանունները, ավտոմեքենաների անվանումները, ձիերի, այլ կենդանիների անունները, որոնք գոյություն են ունեցել նախորդ դարի 30-40-ական թվականներին: Պատասխանը միանշանակ է՝ առանց այդ բառապաշարը հասկանալու հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի, նրա կոլորիտի, հումորի, տարբեր դարձվածային միավորների, փոխաբերական արտահայտությունների մասին:

Գրական-գեղարվեստական տեքստի ընթերցանությունը հնարավորություն է ընթերում ճիշտ պատկերացում ունենալ նկարագրվող ժամանակաշրջանում ապրող մարդկանց հոգեվիճակի մասին, հասկանալ, թե տվյալ ազգամշակութային հանրությանը վարքագծի ինչ մոդելներ են եղել բնորոշ: Սովորողը պետք է համարժեք պատկերացում ունենա գործող

¹⁵ Ишханян Н.Б. Пути формирования лингвосоциокультурной компетенции в интенсивном курсе обучения иностранному языку (англ. язык в неязыковом педагогическом вузе): Автореф. дис. канд. пед. наук. М., 1996. - 2 4 с.

¹⁶ Меркиш Н.Е. Использование аутентичного контекста как источника информации о культурном компоненте изучаемой лексики // Филология и проблемы преподавания иностранных языков. М., 2 008. С. 106-111.

անձնանց հաղորդակցական վարքագծի մասին: Ընդհանուր առմամբ, գրական տեքստը հարուստ մշակութաբանական գիտելիքի աղբյուր է: Նրա ընթերցանությունը հնարավորություն է տալիս սովորողին յուրացնել նրանում առկա հանրամշակութային գիտելիքները, առանձնացնել պատմշակութային, էթնոմշակութային ֆոնը: Օրինակ՝ «Իմ անունն է Արամ» պատմվածաշարում կարելի է առանձնացնել երկու էթնոմշակութային ֆոն՝ ամերիկյան և հայկական: Հայկական ֆոնը ներկայանում է նախադեպային տեքստերով, որոնք հայտնի են միայն հայախոս մարդկանց: Փաստորեն՝ մենք գործ ուենք տարբեր Ամերիկայի մասին տեքստերի հետ, որ ամբողջանում են կորսված հայրենիքի մասին ներտեքստերով¹⁷:

Գեղարվեստական տեքստի հետ աշխատանքը հնարավորություն է ընձեռում ուսանողին ընդհանուր պատկերացում կազմել հանրամշակութային նշույթների կամ մարկերների մասին: Հանրամշակութային նշույթ ասելով հասկանում են այն հոգևոր կառույցները, որոնք ներդրվում են առաջնային սոցիալականացման ընթացքում (աշխարհի ընկալումն ընդհանուր առմամբ և աշխարհը որպես ամբողջություն): Այն մեկնվում է նաև որպես այդ ընկալման տեղեփոխություն անգիտակցականի ոլորտ: Այսինքն, տեղի է ունենում մենթալ կառույցների կազմավորում: Հանրամշակութային նշույթն առկա է ոգու ոլորտում մինչև գիտակցության առաջ գալը:

Հանրամշակութային նշույթների ազդեցությամբ տեղի է ունենում գիտելիքի փոխանցման ընթացքում պատկերի և նշանի փոխակերպում.

- առաջնային սոցիալականացման փորձ,
- առաջին յուրացված լեզու¹⁸:

Ակնհայտ է, որ լեզվակիրներին բնորոշ լեզվական միջավայրի բացակայությունը հնարավորություն չի տալիս սովորողներին ձեռք բերել առաջնային սոցիալականացման փորձ: Այդ փորձը վերաբերում է հայախոս սովորողների շրջանում հայերենի տիրապետելուն: Հարց է առաջանում, այդ, այսպես կոչված առաջնային փորձը, որը բնորոշ է անգլալեզու մարդկանց, ինչպես ձեռք բերել ուսումնական պայմաններում: Փաստորեն, ամեն լեզվական հանրության բնորոշ է որոշակի պատկերի և նշանի փոխակերպում կոնկրետ մշակութային ավանդույթի շրջանակներում, որն ուղեկցվում է «մշակութային իմպրինտիզմով և տաքուացմամբ¹⁹:

¹⁷ Սարոյան Վ., Ընտիր երկեր 4 հատորով: /Կազմ.՝ Ն. Գոնչար, խմբագիր Ն. Գոնչար, Ֆ. Մելոյան: Անգլ. թարգմ. Գր. Քեշիշյան և ուրիշ., Եր., Սովետ գրող.1986, հ.1.-488 էջ/:

¹⁸ Морэн Э. Дух и мозг //Современная наука: познание человека. -М., 1988. - С.70.

¹⁹ Руснак Н. А. Социокультурные маркеры и особенности трансформации образа и знака в художественном творчестве:Канд. фил. наук. -2 003.- 161 с.

Հանրամշակութային նշույթների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում յուրացնել լեզվակիրներին բնորոշ մենթալ կառույցները, որոնք ձեռք են բերվում առաջնային սոցիալականացման դեպքում: Օրինակ՝ ամեն մի լեզվական հանրություն կոնկրետ իմաստ է դնում «մերոնք», «ձերոնք» հասկացությունների մեջ: Ամեն ազգ ունի որոշակի պատկերացումներ «բարեկամ» և «թշնամի» ժողովուրդների մասին: Անգամ նույն Մեծ Բրիտանիայում անգլիացիներին և շոտլանդացիներին բնորոշ են տարբեր հանրամշակութային նշույթներ: Ուսումնասիրելով այդ նշույթները՝ հնարավոր է դառնում հասկանալ լեզվակիրների մենթալիտետը:

Գեղարվեստական տեքստն օգնում է սովորողներին յուրացնել անգլալեզու մարդկանց վարքագծի հանրամշակութային նորմերը, հանրային պայմանականությունները, ավանդույթներն ու ծիսակատարությունները: Նրանք ավելի շատ ենթագիտակցորեն յուրացնում են ընթերցանության ժամանակ անգլալեզու մարդկանց ոչ խոսքային հաղորդակցության միջոցները՝ մարմնի լեզուն, ողջունելու ձևերը, գրկախառնվելը, համբուրվելու ձևերը, աչքերի արտահայտությունը, շփման հեռավորությունը և այլն: Ակնհայտ է, որ ֆիլմերն ավելի լավ են ներկայացնում հաղորդակցության ոչ խոսքային միջոցները: Սակայն երբեմն գեղարվեստական նկարագրությունն ավելի տպավորիչ է լինում և ավելի երկար է մտապահվում:

Անհրաժեշտ է նշել, որ բուն լեզվակիրների կողմից ընթերցվող գեղարվեստական գրականության ուսումնասիրությունը զարգացնում է սովորողների հանրամշակութային կոմպետենցիան թե՛ գիտակցական, թե՛ ենթագիտակցական մակարդակներում: Կարևորն այն է, որ սովորողները պետք է աստիճանաբար ուսումնասիրեն և յուրացնեն այն նախադեպային տեքստերը՝ պատմվածքները, բանաստեղծությունները, այլ գրական ժանրերի գործերը, որոնց ծանոթ են լեզվակիրները: Ակնհայտ է, որ քանակական առումով փոխահասուցել այդ բացն ուսումնական պայմաններում շատ դժվար է: Սակայն անհրաժեշտ է խնդիրը հստակորեն ձևակերպել, որ հնարավոր լինի կիրառել ուսուցման այս կամ այն ռազմավարությունը:

Խնդիր է դրվում որոշակի ժամանակահատվածում գեղարվեստական գրականության ընթերցանության միջոցով յուրացնել լեզվակիրների բանահյուսությունը, որն արտացոլում է տվյալ ժողովրդի կոլեկտիվ ենթագիտակցականի առանձնահատկությունները: Պատահական չէ, որ հանրամշակութային կոմպետենցիայի կարևոր բաղադրիչ է համարվում

հանրային հաղորդակցությունը, ազգային մենթալիտետը և ազգային նվաճումները²⁰:

Այսպիսով, խնդիր է դրվում ընտրել և ընթերցել այնպիսի գեղարվեստական տեքստեր, որոնք թե՛ գիտակցական, թե՛ ենթագիտակցական մակարդակներում հնարավորություն են ընձեռում սովորողներին յուրացնել հանրամշակութային իրողությունները, մենթալ կառույցները, հանրամշակութային նշույթները, ոչ խոսքային հաղորդակցական միջոցները, այն նախադեպային տեքստերը, որոնք կազմում են տվյալ էթնոսի սխեմատայի հիմքը:

Եզրակացություն

Գեղարվեստական տեքստն արդյունավետ միջոց է լեզվի և մշակույթի համակարգված ուսուցման համար, դրանով է պայմանավորված այն փաստը, որ գրական տեքստը եղել և մնում է մշակութային, հանրամշակութային, միջմշակութային կոմպետենցիաների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց: Այն հեշտացնում է երկրորդ լեզվի լեզվակաղապարների յուրացումը, ինչպես նաև նպաստում է դրանց իմաստային-գուգորդական դաշտի յուրացմանը:

Արտացոլելով կոնկրետ հանրամշակութային հարաբերություններ, իրողություններ, երևույթներ, տվյալ ժամանակաշրջանում ապրած, ապրող մարդկանց գաղափարներն ու երազանքները՝ գրականությունն օգնում է յուրացնել լեզվակիրների մշակույթը ոչ թե անհատի մակարդակում, այլ տարբեր անհատների տեսանկյունից:

Գրական տեքստը որպես հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման կարևորագույն միջոց կատարում է մոտիվացնող, ընթերցողին յուրահատուկ ճանաչողական գործընթացի մեջ ներգրավող, գեղագիտական հաճույք պատճառող, գեղագիտական ճաշակը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնող գործառույթներ:

Գրական-գեղարվեստական տեքստի ընթերցանությունը հնարավորություն է ընձեռում յուրացնել տվյալ ազգամշակութային հանրությանը բնորոշ վարքագծի մոդելները, հանրամշակութային նշույթները, հաղորդակցական վարքագծի հանրամշակութային նորմերը, հանրային և անհատական պայմանականությունները, ավանդույթներն ու ծիսակատարությունները:

²⁰ Полушина Л.Н. Текстотека учебника как основа формирования социокультурной компетенции. Дисс. канд. пед. наук. М., 1995. 136 с.

Elen Avetisyan

A fictional text as a means of forming students' sociocultural competence

Summary

The literary text is an effective means of systematic teaching language and culture. A literary text, as the most effective means of developing intercultural competence, motivates, involves the reader in a kind of cognitive process, causes aesthetic pleasure, develops aesthetic taste, critical and creative thinking. Reading a literary text enables students to master the behavior patterns characteristic of a given ethno-cultural society, socio-cultural markers, socio-cultural norms, traditions and rituals.

Literary text as an important means of forming public cultural competence performs functions of motivating, involving the reader in a unique cognitive process, giving aesthetic pleasure, developing aesthetic taste, critical and creative thinking.

The reading of the literary-artistic text provides an opportunity to learn the models of behavior, cultural signs, cultural norms of communicative behavior, public and individual conventions, traditions and rituals characteristic of the given ethno-cultural community.

Элен Аветисян

Художественный текст как средство формирования социокультурной компетентности учащихся

Резюме

Художественный текст является эффективным средством систематического обучения языку и культуре. Художественный текст, как наиболее эффективное средство развития межкультурной компетенции, мотивирует, вовлекает читателя в своеобразный познавательный процесс, вызывает эстетическое наслаждение, развивает эстетический вкус, критическое и творческое мышление.

Чтение художественно-художественного текста дает возможность учащимся овладеть моделями поведения, характерными для данного этнокультурного общества, социо-культурными маркерами, социо-культурными нормами, традициями и ритуалами.

Художественный текст как важное средство формирования общественной культурологической компетенции выполняет функции мотивации, вовлекая читателя в своеобразный познавательный процесс, доставляя эстетическое удовольствие, развивая эстетический вкус, критическое и творческое мышление.

Чтение литературно-художественного текста дает возможность усвоить модели поведения, культурные приметы, культурные нормы коммуникативного поведения, общественные и индивидуальные условности, традиции и обряды, характерные для данной этнокультурной общности.

Խմբագրություն է ուղարկվել 18. 05. 2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 03. 06. 2022թ.

Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.